Սերգեյ Դովլաթով

Կոմպրոմիսներ

Կոմպրոմիս առաջին

(«Սովետական Էստոնիա»: Նոյեմբեր 1973թ .)

«ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ: Ութ երկրներից գիտնականներ են ժամանել Տալլին՝ մասնակցելու Սկանդինավիային եւ Ֆինլանդիային նվիրված 7-րդ գիտական կոնֆերանսին: Մասնագետները ներկայացնում են ԽՍՀՄ-ը, Լեհաստանը, Հունգարիան, ԳԴՀ-ն, Ֆինլանդիան, Շվեդիան, Դանիան եւ ԳՖՀ-ն: Կոնֆերանսի շրջանակներում աշխատում է վեց բաժանմունք: 130-ից ավելի գիտնականներ՝ պատմաբաններ, հնէաբաններ, լեզվաբաններ, հանդես կգան զեկուցումներով եւ հաղորդումներով: Կոնֆերանսը կշարունակվի մինչեւ նոյեմբերի 16-ը»:

Կոնֆերանսը տեղի էր ունենում Պոլիտեխնիկական ինստիտուտում: Գնացի, զրուցեցի: Հինգ րոպեից լուրը պատրաստ էր: Հանձնեցի քարտուղարություն: Հայտնվեց խմբագիրը՝ Տուրոնոկը: Մեղուշ, բարեպաշտի կերպարանքով մեկը: Ամաչկոտ սրիկաների տեսակից: Հիմա գրգռված է .

Դուք կոպիտ գաղափարախոսական սխալ եք թույլ տվել:

Թվարկում եք երկրները…

Չի՞ կարելի:

Կարելի է եւ պետք է: Հարցն այն է, թե ինչպես եք թվարկում: Այնտեղ նախ Հունգարիան է, ԳԴՀ-ն, Դանիան, ապա՝ Լեհաստանը, ԽՍՀՄ-ը, ԳՖՀ-ն…

Բնական է, ըստ ռուսաց լեզվի այբուբենի…

Բայց չէ՞ որ դա ապադասակարգային մոտեցում է, տնքալով ասաց Տուրոնոկը, գոյություն ունի կուռ հերթականություն: Նախ՝ ժողովրդական դեմոկրատիայի երկրները: Ապա՝ չեզոք պետությունները: Եվ վերջում միայն՝ բլոկի մասնակիցները:

Օքեյ, ասացի:

Վերաշարադրեցի, հանձնեցի քարտուղարություն: Հաջորդ օրը հեւիհեւ ներս ընկավ Տուրոնոկը .

Դուք ինձ ծաղրո՞ւմ եք: Դիտմա՞մբ եք անում:

Ի՞նչ է եղել:

Դուք խառնել եք ժողովրդական դեմոկրատիայի երկրները: Ձեր գրածում ԳԴՀ-ն Հունգարիայից հետո է: Կրկի՞ն այբբենական կարգով: Մոռացե՛ք այդ օպորտունիստական բառը: Հունգարիան՝ երրորդ տեղում: Այնտեղ ապստամբություն է եղել:

Իսկ Գերմանիայի դեմ պատերազմել ենք:

Մի՛ վիճեք: Ինչո՞ւ եք վիճում: Սա ուրիշ Գերմանիա է, ուրի՛շ: Չեմ հասկանում, ո՞վ է ձեզ վստահել: Քաղաքական կարճատեսությո՛ւն: Բարոյական մանկամտությո՛ւն: Ձեր հարցը դնելու ենք…

Այդ լուրի համար երկու ռուբլի վճարեցին: Կարծում էի՝ երեք կվճարեն: